

[184954]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» հունվար 2016թ.

N 64 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N25-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշման հավելված N 1-ի 12-րդ կետի «ա» ենթակետի՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի «Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը, տարածքային մակարդակում սոցիալական համաձայնագրի ընդունման ընթացակարգը, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի օրինակելի աշխատակարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2000 թվականի հուլիսի 31-ի N36-Պ և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 18-ի N153-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի N 1 հավելվածի 3.2-րդ՝

ա. կետը «ընդգրկվում են» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության _____ մարզպետարանի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի _____ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի,» բառերով,

բ. կետում «հինգ» բառը փոխարինել «վեց» բառով,

գ. կետում «ինն» բառը փոխարինել «տասնմեկ» բառով.

2) հրամանի N 1 հավելվածի 3.6-րդ կետը՝ «վերջնաժամկետը» բառից հետո լրացնել «՝ մեկ ամիս» բառերով.

3) հրամանի N 1 հավելվածի 3.8-րդ կետը՝ «քաղաքապետին» բառից հետո
ըրացնել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

4) հրամանի N 1 հավելվածի 3.9-րդ կետում «հինգից» բառը փոխարինել «վեցից»
բառով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:



Ա. ԱՍԱՏՅԱՆ